ECOLUR
NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY

HEINRICH BÖLL STIFTUNG
ԵՐԵՎԱՆ
Հարավային Կովկասի տարածաշրջան

ՀՀ, ԵՄ և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (CEPA, 2017 թվական) և դրա կիրարկման ճանապարհային քարտեզի՝ կլիմային առնչվող գործողությունների կատարման վերլուծություն

Երևան 2024թ.

«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն սույն վերլուծությունը կատարել է «Համայնքների հզորացում Հայաստանում կլիմայական քաղաքականության իրականացմանը մասնակցության և իրազեկման միջոցով» ծրագրի շրջանակներում, որն իրականացնում է Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակի հետ համագործակցությամբ:

Վերլուծության բովանդակության համար պատասխանատու է միայն հեղինակը, և այն որևէ կերպ չի կարող ընկալվել որպես Հայնրիխ Բյոլ հիմնադրամի Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակի տեսակետ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վերլուծված է ՀՀ և ԵՄ և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (CEPA, 2017 թվական) և դրա կիրարկման ճանապարհային քարտեզի (2019)՝ կլիմային առընչվող գործողությունների օրենսդրական և գործնական կատարողականը:

Վերլուծության տեղեկատվական հենք են հանդիսացել ՀՀ իրավական տեղեկատվական համակարգի, ՀՀ կառավարության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, Կլիմայի փոփոխության տեղեկատվական հարթակի, ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական կայքերը, Լոռու մարզի Փամբակ և Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքապետարանների, «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի պաշտոնական կայքերը, կլիմայի փոփոխության ոլորտների վերաբերյալ ազգային և միջազգային համապատասխան իրավական ակտերը, փաստաթղթերը:

Համայնքների մասնակցությունն ապահովելու, կարծիքների և առաջարկությունների ձևավորման նպատակով օգտագործվել են հաղորդակցության տարբեր միջոցներ՝ անմիջական շփումներ, հարցազրույցներ, հարցումներ, քննարկումներ ոլորտային մասնագետների, համայնքների ներկայացուցիչների հետ:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՍԳ	Ազգային մակարդակով սահմանված գործողություններ
ԵՀ	Եվրոպական հանձնաժողով
ԵՄ	Եվրոպական միություն
ԿՓ	Կլիմայի փոփոխություն
ԿՓՀ	Կլիմայի փոփոխության հարմարվողություն
ՀԱԾ	Հարմարվողականության ազգային ծրագիր
ՀԸԳՀ	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՃՔ	Ճանապարհային քարտեզ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր
ՄԱԿ-ի ԿՓՇԿ	Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիա
ՇՄԱԳ	շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄԱԳՓ օրենք	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք
ՌԷԳ	ռազմավարական էկոլոգիական գնահատում
ՑԱԶՌ	Ցածր արտանետումներով զարգացման ռազմավարություն
ՓՀ	Փարիզյան համաձայնագիր

ՀՀ, ԵՄ և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (CEPA, 2017 թվական) և դրա կիրարկման ճանապարհային քարտեզի՝ կլիմային առնչվող գործողությունների կատարման վերլուծություն

2017 թ. նոյեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետության, ԵՄ և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի, դրանց անդամ պետությունների միջև ստորագրվեց Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԳԸՀ/CEPA)[1]: Նպատակն է ամրապնդել Կողմերի միջև համապարփակ քաղաքական և տնտեսական գործընկերությունն ու համագործակցությունը՝ հիմնված ընդհանուր արժեքների և սերտ կապերի վրա, այդ թվում՝ բարձրացնելով Հայաստանի Հանրապետության մասնակցությունը Եվրոպական միության քաղաքականությանը, ծրագրերին և գործակալությունների աշխատանքներին: Նպատակներից է ամրապնդել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտների, այդ թվում կլիմայի վերաբերյալ քաղաքական երկխոսության շրջանակները: 2019 թ. հունիսի 1-ի ՀՀ վարչապետի N 666-L որոշմամբ[2] ընդունվեց ՀԳԸՀ-ի կիրարկման ճանապարհային քարտեզը 2021-2026 թթ. համար, որի 120-131 միջոցառումները վերաբերում են կլիմայի փոփոխությանը:

«ԵՄ-ն կլիմայի համար» ՄԱԶԾ-ԵՄ ծրագրի շրջանակներում 2023 թվականին պատրաստվել է «ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային քարտեզի իրականացման վերաբերյալ» զեկույցը[3] :

Զեկույցը տվել է CEPA-ի ճանապարհային քարտեզով ամրագրված միջոցառումների համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվներին և հրահանգներին/ կանոնակարգերին: Հիմնականում բացահայտվել են մինչև 2023թ. ՀԸԳՀ ճանապարհային քարտեզով նախատեսված միջոցառումների ընթացքն ու բացերը: Անդրադարձ է կատարվել ՓՀ-ից բխող պարտավորությունների կատարման գործողություններին, ՋԳ արտանետումների գույքագրման ազգային համակարգին, ՋԳ դիտանցման, հաշվետվությունների ներկայացման, ստուգման և կատարման համակարգերի ու հանրային քննարկումների ընթացակարգերի, ԿՓ ինստիտուցիոնալ ասպեկտներին և օզոնային շերտը քայքայող նյութերի փոխարինմանն ուղղված միջոցառումներին:

Ըստ զեկույցի այդ գործողություններից հիմնականում իրականացվել են 5 միջոցառում (120.123.124.125.130), մասնակիորեն իրականացվել է 1-ը (121), մեկնարկել են 6-ը (122,126,127,128,129,131): ՃՔ վերանայման առաջարկությունները հիմնականում կրում են ԵՄ հրահանգների/կանոնակարգերի կոնկրետացում ըստ հոդվածների, ՃՔ–ով նախատեսվող կոնկրետ իրավական ակտի մատնանշում՝ չափելի արդյունքների ստացման առումով, որոշ միջոցառումների կատարման ժամկետների երկարացման վերաբերյալ, և կլիմայի փոփոխության վերաբերյալ օրենքի ընդունման

[1] https://www.mfa.am/filemanager/eu/CEPA_ARM_1.pdf
[2] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=153164
[3] https://nature-ic.am/hy/publications/report-progress-of-roadmap-for-implementation-cepa

(միջոցառումներ 120, 123 և 124) ամրագրման պահանջի ներառում, ՀՀ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի մոտարկում կլիմայի հետ կապված ԵՄ թիվ 2003/87 հրահանգին (կապված նույնականացման, արտանետումների թույլտվությունների հասկացության հետ) և «50 ԵՄ օդի պահպանության» դիրեկտիվի կոնկրետ հոդվածներին համապատասխանեցում:

Ճանապարհային քարտեզով ամրագրված միջոցառումների կատարման գնահատման հիման վրա կատարվել են դրա վերանայման առաջարկություններ:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել ՀԳԸՀ կիրարկման ճանապարհային քարտեզով նախատեսված կլիմայական միջոցառումների կատարումը, կիրառելիությունը, քաղաքացիական հասարակության, հատկապես, համայնքային ներգրավվածությունն այդ միջոցառումներին, առկա բացերը, օրենսդրական անհամապատասխանությունները և տալ դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:

Ճանապարհային քարտեզի համաձայն՝ Հայաստանը նախատեսել է 12 միջոցառում (120-131 միջոցառումներ), որոնք ապահովում են կլիմայի փոփոխությանը վերաբերող ՀԳԸՀ-ի 51-56 հոդվածների պահանջների կատարումը:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ՃՔ-ի 12 միջոցառումներից հիմնականում կատարվել է 3-ը՝ թիվ 122-ը, թիվ 124-ը և թիվ 125-ը: Մասնակի կատարվել են 5-ը՝ թիվ 120-ը, թիվ 121-ը, թիվ 123-ը, թիվ 130-ը, թիվ 131-ը: Չեն կատարվել 4-ը՝ թիվ 126-ը, թիվ 127-ը, թիվ 128-ը, թիվ 129-ը:

Աղյուսակ 1: ՀԳԸՀ-ի ճանապարհային քարտեզով նախատեսված կլիմայական միջոցառումների կատարման արդյունքը

N	Նախատեսվող միջոցառումը	Ընդունված և մշակված իրավական ակտեր	Արդյունքը
120	«Փարիզյան համաձայնագրից» բխող պարտավորությունների կատարման գործողությունների ծրագրի մշակում, համապատասխան կառուցվածքների և ջերմոցային գազերի նույնականացման համակարգի ստեղծում, 2003/87/ԵՀ հրահանգի I և II հավելվածներ, ջերմոցային գազերի (ներառյալ ավիացիոն արտանետումների) դիտանցման, հաշվետվություններ	1. «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին» N 610-Լ որոշումը[4] 2. ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363 - Ա որոշմամբ հավանության է արժանացել կառավարության 2021-26թթ	Մասնակի կատարված «Կլիմայական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է, սակայն դեռ չի ընդունվել:

[4] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=151985

	ներկայացնելու, ստուգման և կատարման համակարգերի և հանրային քննարկումների ընթացակարգերի սահմանում, **2026 թ.-ի 1-ին եռամսյակ**	ծրագիր[5], որը հաստատվել է ՀՀ կառավարության 18 նոյեմբերի 2021 թվականի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ:[6] 3. Կլիմայական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագիծ 4. «Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024թ. հունվարի 11-ի N 54-Ն որոշում[7] 5. «Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները» N 2343-Ն որոշում[8]	

[5] https://www.gov.am/files/docs/4586.pdf
[6] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=158031
[7] https://www.arlis.am/documentview.aspx/Res/Res/DocumentView.aspx?docID=188713
[8] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=188071

121	Կլիմայի փոփոխությանն առնչվող ջերմոցային գազերի արտանետումների (ներառյալ ավիացիոն արտանետումների) գույքագրման ազգային համակարգի ստեղծում, քաղաքականությունների, միջոցների և կանխատեսումների ներպետական համակարգի ստեղծում և համապատասխան ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում, 280/2004/ԵՄ որոշումն ուժը կորցրած ճանաչող 525/2013/ԵՄ Կանոնակարգի հոդվածներ 5 և 12, **2026 թ.-ի 1-ին եռամսյակ**	1.ՀՀ կառավարության 13 մայիսի 2021 թվականի «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 749 -Լ որոշում[9] 2.«Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը և 2022-2026 թթ. միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի նոյեմբերի 3-ի N 1692 - Լ որոշում[10] 3.«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1886-Լ որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2023թ. հուլիսի 20-ի որոշում[11] 4.«Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի 2023-2026 թվականների զարգացման ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թ. փետրվարի 9-ի N 174-Լ որոշում[12] 5.«Կլիմայի փոփոխության գործոնների ինտեգրում «Սևան» ազգային պարկի	Մասնակի կատարված **Չեն կատարվել հետևյալ միջոցառումները.** - Տարածքային (մարզային) զարգացման ռազմավարություններում ԿՓՀ և կլիմայական ռիսկերի կառավարման նկատառումների ինտեգրման վերաբերյալ ուղեցույցների մշակում -ՀԱԾ գործընթացի համար ռեսուրսների մոբիլիզացման մոտեցումների և իրականացման ծրագրի մշակում - Կլիմայական կանխատեսումների և վաղ ազդարարման համակարգի բարելավմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակում - ԿՓ ուղղությամբ պետական և մասնավոր հատվածի կատարած ծախսերի բացահայտման նպատակով բյուջեի

[9] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152612
[10] https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GV1E-287B-6173-DAB9/1692.1.pdf

[11] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=180654
[12] https://www.arlis.am/documentview.aspx?docid=174219

		կառավարման պլանի մեջ և հարմարվողականության միջոցառումների ներդրում», մշակման փուլում է «ԵՄ-ն Սևանի համար» ծրագրի շրջանակում 6. Տավուշի մարզի կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրի նախագիծ[13] 7. Շիրակի մարզի կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրի նախագիծ[14] 8. Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի հարմարվողականության ծրագրերի նախագծեր են կազմվել ՄԱԶԾJSB-2 ծրագրով 9. Միավորված Ազգերի Կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհուրդ ստեղծելու, դրա կազմը և աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի n 955-ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2021թ. հուլիսի 6-ի N 719-Ա որոշում[15] 10. «Հարմարվողականության ազգային ծրագրի գործընթացի և կլիմայի փոփոխության հարմարվողականության վերաբերյալ հա-	կլիմայական նշագրման համակարգի մշակում

[13] https://drive.google.com/drive/folders/1Jp-IoBfzr2UJXcvPbBF5YhvhjwQojC7e
[14] https://drive.google.com/drive/folders/1Jp-IoBfzr2UJXcvPbBF5YhvhjwQojC7e
[15] https://www.e-gov.am/decrees/item/23576/

		ղորդակցության և իրա-զեկման ազգային ռազմավարական պլան»[16] 11. Հայաստանի հարմարվողականության մոնիտորինգի եւ գնահատման շրջանակը եւ ճանապարհային քարտեզ[17] 12. «Բնակավայրերի համար կլիմայի փոփոխության և հարմարվողականության ծրագրերի մշակման վերաբերյալ» ուղեցույց[18] 13. Կլիմայական և կա-պակցված բնական վտանգ-ների և ռիսկերի աշխարհագրական տեղեկատվական համակարգերի քարտեզների ատլաս Շիրակի և Լոռու մարզերի համար[19] 14. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-150-Ն օրենք, ուժի մեջ է 09.06.2023թ.[20] 15. «Պետական փորձաքննական դրական եզրակացություն ստացած հիմնադրութային փաստաթղթերում չներառված՝ բնության հատուկ պահպանվող տարածքներում կամ անտառային հողերում կամ բնակավայրերի կանաչ գոտիներում կամ պատմամշակութային	

[16] https://drive.google.com/file/d/1UVqT5ECZrnzoCjLcnBjVHQ2mjjbIpjFJ/view
[17] https://drive.google.com/file/d/1cRTTlptByYG_3dnP3kJzRBX7erhyhPpy/view
[18] https://api.mtad.am/storage/pages/files/2022/11/pdf/07_12-01-sc796-6368bb5f3eccc.pdf
[19] https://drive.google.com/file/d/1mvxjcP83hdYIZW5jkWxfeHafr3KeCodD/view
[20] https://www.arlis.am/documentview.aspx?docid=178443

		հուշարձանների սահմաններում կամ բնապահպանական հողերում գնահատման և փորձաքննության ենթակա գործունեության տեսակները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 2N 638 – Ն որոշում[21] 16. «Ռազմավարական էկոլոգիական գնահատման և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուղեցույցները հաստատելու մասին» նախարարի հրամանի նախագիծ[22] 17. «ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի հրամանը ՀՀՇՆ 22-01-2024 «շինարարական կլիմայաբանություն» ՀՀ շինարարական նորմերը հաստատելու և ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011 թվականի սեպտեմբերի 26-ի N 167-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024թ. հունվարի 15-ի N 03-Ն հրաման[23] 18. ՀՀ Ջրային օրենսգրքում *07.07.22 ՀՕ-316-Ն:* կատարված փոփոխություններ[24]	
122	Ջերմոցային գազերի մարդածին արտանետումների ազգային կադաստրների և ազգային հաղորդագրությունների և երկամյա զեկույցների	Հայաստանն իր պարտավորությունների կատարման շրջանակներում մշակել և ներկայացրել է կոնվենցիայի դրույթների կատարման վերաբերյալ 4	Հիմնականում կատարված

[21] https://e-gov.am/gov-decrees/item/42558/%20
[22] https://www.e-draft.am/index.php/projects/7464/about

[23] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188846
[24] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166206

	պարբերական զարգացում, 2026 թ.-ի 1-ին եռամսյակ	հաղորդագրություն (վերջինը՝ 2019թ.) և 3 երկամյա առաջընթացի զեկույց (վերջինը՝ 2021թ.): ՋԳ ազգային կադաստրը 1990-2019 թթ. համար մշակվել է 2023թ.:	
123	Չափողական, հաշվետվայնության ու հավաստագրման (MRV) համակարգի հիմնում, կլիմայի փոփոխության խնդիրների լուծմանն ուղղված տեխնոլոգիաների զարգացման և փոխանցման գործընթացի ձևավորում ու հետևողական ամրապնդում, **2026 թ.-ի 1-ին եռամսյակ**	1.«Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024 թ. հունվարի 11-ի N 54-Ն որոշում[25] 2. «Հայաստանում ջերմոցային գազերի արտանետումների ազգային կադաստրի գործառնական համակարգի և չափումների, հաշվետվայնության և հավաստագրման համակարգի մշակման ճանապարհային քարտեզ» ամփոփիչ զեկույց[26] ՀՀ ՇՄ նախարարի հրաման	Մասնակի կատարված Մեղմման գործողությունների հավաքագրման կարգի մշակում
124	Օզոնային շերտը քայքայող նյութերի՝ հիդրոքլորֆտորածխածինների և դրանց փոխարինողների՝ հիդրոֆտորածխածինների փոխարինմանը ուղղված միջոցառումների իրականացում,ԵՄ, **2024 թ.-ի 1-ին եռամսյակ**	1. «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-218-Ն օրենքը խմբագրվել է «Օզոնային շերտի պահպան ության մասին» ՀՀ օրենքի 2020 թվականի մարտի 4-ին[27] 2.«Օզոնային շերտի պահպանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2023 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՕ-398-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող	Հիմնականում կատարված

[25] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188713
[26] https://nature-ic.am/hy/publications/roadmap-for-the-development-of-a-functional-national-greenhouse-gas-emissions-inventory-system-and-mrv-system-for-armenia
[27] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=187764

		միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 2024թ. փետրվարի 14-ի 136-Ա որոշում[28] 3. «ՀՀ կառավարության որոշումը օզոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների ներմուծման ընդհանուր չափաքանակները (քվոտաները) սահմանելու և ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 13 մայիսի 2021 թվական, N 754-Ն որոշում[29] 4. «Օզոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների առաքման թույլտվության էլեկտրոնային եղանակով տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 12 օգոստոսի 2021 թվականի N 1304-Ն որոշում[30] 5. ՀՀ կառավարության որոշումը օզոնային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների ներմուծման անհատական չափաքանակի օգտագործման մասին հաշվետվության հաշվառման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1565-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության 28 հոկտեմբերի 2021	

[28] https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=189693
[29] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=184188
[30] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155131

		թվական, N 1761-Ն որոշում[31] 6. «Հիդրոֆտորածխածինների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 20 օգոստոսի 2020 թվականի N 1368-Ն որոշում[32] 7. ՀՀ «հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք՝ ընդունված է 2022 թվականի մարտի 4-ին[33] 8. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների (07.12.2022թ.)[34] 9. «Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարությունը (մինչև 2050 թվական) հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թ. դեկտեմբերի 28-ի N 2318-Լ որոշում[35]	
125	Բնապահպանության նախարարությունը հանդիսանում է օզոնային շերտը քայքայող նյութերի բնագավառում միջոցառումների իրականացման լիազոր մարմին։ Ներկայումս գործում են Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին ՀՀ օրենքը և օզոնային շերտը քայքայող նյութերի և դրանց փոխարինողների գործածումը	1. «Օզոնային շերտի պահպանության մասին» լրացումներ և փոփոխություններ օրենքում կատարելու մասին» ՀՀ օրենք 20[36]	Հիմնականում կատարված

[31] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=157289
[32] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=162438
[33] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=160926
[34] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172207

[35] https://www.e-gov.am/gov-decrees/item/41925/
[36] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=187764

	կարգավորող մի շարք ենթաօրենսդրական ակտեր, որոնք լրամշակման անհրաժեշտություն ունեն՝ ներառելու ֆտորացված ջերմոցային գազերի վերաբերյալ կարգավորումներ, **2024 թ.-ի 1-ին եռամսյակ**		
126	Ֆտորացված ջերմոցային գազերի օգտագործման (փուլային կրճատմամբ) ազգային ծրագրի մշակում, ինչպես նաև ծրագրից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի լրամշակում, միջոցառումների ծրագրի մշակում, **2024 թ.-ի 1-ին եռամսյակ**		Չկատարված Հայաստանի Հանրապետությունը (Շրջակա միջավայրի նախարարություն) 2020 թ. օգոստոսին ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի (UNEP) և ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման ծրագրի (UNIDO) հետ համատեղ մշակել է ՀՖԱ-ների (ֆտորացված ջերմոցային գազեր) փուլային կրճատման ծրագրային փաստաթղթի նախագիծը և ներկայացրել այն Մոնրեալի արձանագրության իրականացման Բազմակողմանի հիմնադրամի գործադիր կոմիտեի նիստին: ՀՖԱ-ների կրճատման առաջին փուլի ծրագիրն արդեն հաստատվել է Հայաստանի համար, որի մեկնարկը նախատեսվում է այս

			տարի՝ 4-րդ եռամսյակում:[37]
127	Ֆտորացված Ջերմոցային գազերի օգտագործման (փուլային կրճատմամբ) ազգային ծրագրի մշակում, որի մեջ կներառվի նաև վերոնշյալ հոդվածներով նախատեսված միջոցառումները, **2024 թ.-ի 1-ին եռամսյակ**		Չկատարված
128	Պիտակավորման համակարգի ստեղծում այն արտադրատեսակների և սարքավորումների համար, որոնք պարունակում են ֆտորացված ջերմոցային գազեր, կամ որոնց գործունեությունը կախված է այդ գազերից (12-րդ հոդված) Համապատասխան հատվածներից արտանետումների վերաբերյալ տվյալների ձեռքբերման համար հաշվետվություններ ներկայացնելու համակարգերի ստեղծում (19-րդ և 20-րդ հոդվածներ), **2024 թ.-ի 1-ին եռամսյակ**		Չկատարված
129	Ֆտորացված ջերմոցային գազերի օգտագործման (փուլային կրճատմամբ) ազգային ծրագրի մշակում, որի մեջ կներառվի կատարման համակարգի վերաբերյալ դրույթներ, **2024 թ.-ի 1-ին եռամսյակ**		Չկատարված
130	Կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության հայեցակարգի ու ազգային գործողությունների ծրագրի մշակում՝ ուղղված գյուղատնտեսական, տնտեսական և կլիմայի վրա	Տե՛ս 121-ի և 124-ի միջոցառումների ներքո	Մասնակի կատարված Չեն կատարվել հետևյալ միջոցառումները. - Տարածքային (մարզային)

37 https://open.unido.org/projects/AM/projects/240166

	հնարավոր ազդեցություն ունեցող այլ ոլորտներում կլիմայական փոփոխությունների մեղմացման, նվազեցման և կանխարգելման պահանջներին և միջոցառումներին համահունչ գործունեության պլանավորմանը և իրականացմանը, **2021 թ.-ի 1-ին եռամսյակ**		զարգացման ռազմավարություններում ԿՓՀ և կլիմայական ռիսկերի կառավարման նկատառումների ինտեգրման վերաբերյալ ուղեցույցների մշակում -ՀԱԾ գործընթացի համար ռեսուրսների մոբիլիզացման մոտեցումների և իրականացման ծրագրի մշակում - Կլիմայական կանխատեսումների և վաղ ազդարարման համակարգի բարելավմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակում - ԿՓ ուղղությամբ պետական և մասնավոր հատվածի կատարած ծախսերի բացահայտման նպատակով բյուջեի կլիմայական նշագրման համակարգի մշակում
131	Ազգային օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի սահմանում Հսկման ենթակա նյութերի՝ բացառությամբ հատուկ կիրառությունների, և մինչև [2019 թվականի հունվարի 1-ը]՝ հիդրոքլորֆտորածխաջրածինների (ՀՔՖԱ-ների)	1.«Օզոնային շերտի պահպանության մասին» ՀՀ օրենք 2.«Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի N 1565-Ն որոշման մեջ փոփոխություններ և	Մասնակի կատարված Համապատասխան ոչ բոլոր իրավական ակտերն են ընդունվել:

	արտադրության արգելքի սահմանում (4-րդ հոդված) Հսկման ենթակա նյութերի արտադրության, շուկայահանման և օգտագործման և բացառություններ կազմող կիրառությունների (որպես հումք, տեխնոլոգիական ազդանյութեր, լաբորատոր և անալիտիկ գործունեության համար էական նշանակության կիրառություններ, հալոնների չափազանց անհրաժեշտ կիրառություններ) և առանձին շեղումների համար՝ ներառյալ արտակարգ իրավիճակներում մեթիլբրոմիդի կիրառությունները (III գլուխ)՝ պայմանների սահմանում Հսկման ենթակա նյութերի բացառություններ կազմող կիրառությունների համար ներմուծման և արտահանման լիցենզավորման համակարգի ստեղծում (IV գլուխ) և ձեռնարկությունների՝ հաշվետվություններ ներկայացնելու պարտավորությունների սահմանում (26-րդ և 27-րդ հոդվածներ) Հսկման ենթակա օգտագործված նյութերը վերականգնելու, վերամշակելու, ռեգեներացնելու (վերականգնելու) և ոչնչացնելու պարտավորությունների սահմանում (22-րդ հոդված) Հսկման ենթակա նյութերի հոսակորուստների դիտանցման և տեսչական	լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 477-Ն որոշում[38]	

[38] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151505

	ստուգումների ընթացակարգերի սահմանում (23-րդ հոդված)		

Հիմնականում և մասնակի կատարված միջոցառումների շրջանակներում ԵՄ իրավական ակտերին մոտարկվել է 6 ՀՀ օրենք, մշակվել է «Կլիմայի քաղաքականության մասին» ՀՀ օրենքի նախագծի հայեցակարգը և օրենքի նախագծի փաթեթը, 16 ենթաօրենսդրական ակտ (ՀՀ վարչապետի և ՀՀ կառավարության որոշումներ), զեկույցներ, ուղեցույցներ:

Ընդունված իրավական ակտերի և նախագծերի ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են բացթողումներ հետևյալ իրավական ակտերում.

1. **«Ջերմոցային գազերի արտանետումների գույքագրման կարգը հաստատելու մասին» 2024 թվականի հունվարի 11 N 54-Ն որոշում[39] (ՀԳԸՀ 54 հոդվածի (j) կետ, ՃՔ 120 միջոցառում)**

➢ **Առկա բացեր**

- Որոշմամբ հաստատված Ձև 4-ում նշվում է համայնքային աղբավայրերում տեղադրված թափոնների ծավալի մասին տեղեկատվության տրամադրման մասին: Մինչդեռ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» և «Թափոնների մասին» ՀՀ օրենքներում բացակայում է «համայնքային աղբավայր» հասկացությունը: Համայնքների վարչական տարածքներում բացի համայնքային կոմունալ ծառայությունների կամ օպերատորների կողմից տեղակայված կոշտ կենցաղային թափոնների վայրերից առկա են նաև ինքնակամ աղբավայրեր և աղբակույտեր, որոնց վերաբերյալ տվյալների հավաքագրում կարգով նախատեսված չէ, ինչը չի ապահովի աղբավայրերից արտանետվող մեթանի ծավալի ճշգրիտ հաշվարկ:
- Ձև 2-ի 2.8 կետով պահանջվող «արձանագրված ապօրինի ծառահատումների թվի» վերաբերյալ տեղեկատվությունը բավարար չէ, քանի որ չի արտացոլում ապօրինի անտառահատումների իրական թիվը, արդյունքում ջերմոցային գազերի հաշվարկը լիարժեք չի լինի:

Առաջարկություն

- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում սահմանել համայնքի կողմից աղբավայրի նկատմամբ հսկողության, աղբի ծավալների հաշվարկի պահանջ, որը կտա ջերմոցային գազերի արտանետումների հաշվետվության համար տեղեկատվության ճշգրտության երաշխիք:

- «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» և «Թափոնների մասին» ՀՀ օրենքներում սահմանել «համայնքային աղբավայր» եզրույթը:

[39] https://www.arlis.am/documentview.aspx/Res/Res/DocumentView.aspx?docID=188713

- Ապօրինի անտառհատումների թվի նվազեցման համար ուժեղացնել էկոպարեկային ծառայության և Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարողությունները:

2. «Հանրության իրազեկման և հանրային լսումների ծանուցման բովանդակությունը, հանրային լսումների ընթացակարգը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում շահագրգիռ հանրության կարծիքների, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրման ընթացակարգը և ժամկետները» ՀՀ կառավարության 2023թ. դեկտեմբերի 28 N 2343-Ն որոշում[40] (ՀԳԸՀ 54 հոդվածի (j) կետ, ՃՔ 120 միջոցառում)

- **Առկա բացերը**

- Հստակեցված չէ ՇՄԱԳՓ օրենքով նախատեսված երկրորդ հանրային լսման դեպքում համայնքի կողմից վերջնական որոշում կայացնելու գործընթացը:

- Հստակեցված չէ ՇՄԱԳՓ օրենքով նախատեսված հանրային լսումներին համայնքի, խոշորացված համայնքների բնակիչների մասնակիցների թիվը, կամ ներկայացուցչական կազմը: Դրա չհստակեցումը հանգեցնում է հանրային լսումների կազմակերպման կամայականության և չի ապահովում նախատեսվող գործունեության վերաբերյալ համայնքի իրական դիրքորոշումը:

- **Առաջարկություն**

- Հստակեցնել երկրորդ հանրային լսման դեպքում համայնքի կողմից վերջնական որոշում կայացնելու գործընթացը:
- Հստակեցնել հանրային լսումներին համայնքի, խոշորացված համայնքների բնակիչների մասնակիցների թիվը և ներկայացուցչական կազմը՝ խուսափելու կամայականություններից և ապահովելու նախատեսվող գործունեության վերաբերյալ համայնքի իրական դիրքորոշումը:

3. «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 749 -Լ որոշում[41] (ՀԳԸՀ 52 հոդված, կետ (b), 54 հոդված, կետեր (c) և (d), ՃՔ 130 միջոցառում)

- **Առկա բացերը**

- Որոշմամբ սահմանված միջոցառումներով նախատեսված էր զբոսաշրջության, էներգետիկայի, առողջապահության, գյուղատնտեսության, անտառների կառավարման կլիմայական հարմարվողականության ծրագրերը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումների ընդունում: Դրանք սահմանված ժամկետներում մշակվել են, սակայն չեն ընդունվել: Փոխարենը ոլորտային հարմարվողականության միջոցառումները ներառվել են ոլորտային ռազմավարություններում՝ չկատարելով 2021 թվականի մայիսի 13-ի N 749 -Լ

[40] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=188071
[41] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152612

որոշման պահանջները, նեղացնելով հարմարվողականության միջոցառումների շրջանակը:

- **Առաջարկություններ**

- Անհրաժեշտ է ապահովել 2021 թ. մայիսի 13-ի N 749 -Լ որոշմամբ սահմանված ոլորտային միջոցառումների կատարումը, ինչը կապահովի ոլորտներում կլիմայի փոփոխության հարմարվողականության համապարփակ և ընդլայնված գործողությունների իրականացում:

4. «Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը և 2022-2026 թթ. միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թ. նոյեմբերի 3-ի N 1692 - Լ որոշում[42] (ՀԳԸՀ 52 հոդված, կետ (b), 54 հոդված, կետեր (c) և (d), ՃՔ 130 միջոցառում)

- **Առկա բացեր**

- Որոշման մեջ հստակ սահմանված չեն ոլորտում լիազորություններ ունեցող պետական գերատեսչությունների միջև ոլորտային քաղաքականություններում փոխհարաբերությունների կարգավորումները, բացառությամբ Ջրային կոմիտեի հետ տեղեկատվության փոխանակման դրույթի:
- Որոշումը չի անդրադառնում ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշման «Կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների» հավելված 1-ում ամրագրված «Ջրային ռեսուրսների հիդրոլոգիական և քիմիական կանխատեսումների մշակում՝ ելնելով կլիմայի փոփոխությունից: Բազիսային, լավատեսական և վատատեսական սցենարների կազմում» միջոցառման կատարմանը:
- Կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրի նպատակի կարևոր սկզբունքի՝ սոցիալ-տնտեսական բացասական հետևանքների նվազեցմանն ուղղված կոնկրետ միջոցառումները բացակայում են:
- Քաղաքացիական հասարակական կազմակերպությունների մասնակցությունը սահմանափակված է միայն ԿՓ տեղական ազդեցությունների դիտորդմամբ: Բացակայում է ջրային ոլորտի հարմարվողականության միջոցառումների իրականացման արդյունավետության գնահատման ցուցանիշներում քաղհասարակության և համայնքների կարծիքի բաղադրիչը:
- 26 միջոցառումների կատարման ժամկետներն անիրատեսական են, քանի որ ծրագիրը հաստատվել է 2022 թ. նոյեմբերին, և 3 տարում այդ միջոցառումների կատարման հավանականությունը ցածր է՝ հաշվի առնելով նաև ռիսկերը: Համայնք

- **Առաջարկություններ**

[42] https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/GV1E-287B-6173-DAB9/1692.1.pdf

- Որոշման մեջ սահմանել ոլորտում լիազորություններ ունեցող պետական գերատեսչությունների միջև ոլորտային քաղաքականություններում փոխհարաբերությունների կարգավորումները:
- Որոշման մեջ ներառել ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշման «Ջրային ռեսուրսների հիդրոլոգիական և քիմիական կանխատեսումների մշակում՝ ելնելով կլիմայի փոփոխությունից: Բազիսային, լավատեսական և վատատեսական սցենարների կազմում» միջոցառումը:
- Մշակել հարմարվողականության ծրագրի՝ սոցիալ-տնտեսական բացասական հետևանքների նվազեցմանն ուղղված կոնկրետ միջոցառումներ:
- Ջրային ոլորտի հարմարվողականության միջոցառումների իրականացման արդյունավետության գնահատման ցուցանիշներում ներառել ՔՀԿ կարծիքների բաղադրիչը:
- Սահմանել ծրագրի իրականացման միջոցառումների իրատեսական ժամկետներ՝ հաշվի առնելով ֆինանսական հնարավորությունները:

5. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1886-Լ որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» 2023 թվականի հուլիսի 20-ի N 1222-Լ որոշում[43] [44] (ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության կատարմանն ուղղված 2023-2026 թվականների միջոցառումների ծրագիրը) (ՀԳԸՀ 52 հոդված, կետ (b), 54 հոդված, կետեր (c) և (d), ՃՔ 130 միջոցառում)

- **Առկա բացեր**
- Որոշմամբ ԿՓ հարմարվողականությանը և դիմակայությանն ուղղված միջոցառումները բավարար չեն գյուղատնտեսության ոլորտում ծագող մարտահրավերներին դիմակայելու համար:
- Ռազմավարությունը չի ներառում ոլորտաում կլիմայայական հետազոտությունների դրույթ, ինչը ՀԳԸՀ-ի հոդված 52-ի (e) կետի պահանջ է:
- Ռազմավարությունը չի ամրագրում տեղական մակարդակներում՝ համայնքների, ֆերմերային տնտեսությունների կողմից ԿՓ հարմարվողականությանը միտված միջոցառումների և ծրագրերի ներկայացման պարագայում դրանց իրագործման համար լիազոր մարմնի օժանդակության, խորհրդատվության ցուցաբերման վերաբերյալ դրույթ:

- **Առաջարկություններ**
- Ռազմավարության մեջ ավելացնել ՀՀ-ում գլուղատնտեսության ոլորտի կլիմայական հետազոտությունների ինստիտուտի հիմնադրման մասին դրույթ:
- Ռազմավարության մեջ ամրագրել ջրային ռեսուրսների կառավարման պետական մարմինների հետ տեղեկատվության փոխանակման և ջրային ռեսուրսների օգտագործման վերաբերյալ դրույթներ:
- Ռազմավարության մեջ ամրագրել կլիմայական ծրագրեր իրականացնող համայնքներին, ֆերմերային տնտեսություններին պետական կառավարման մարմնի կողմից օժանդակություն, խորհրդատվություն ցուցաբերելու վերաբերյալ դրույթներ:

[43] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=180654
[44] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=137852

6. «Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի 2023-2026 թվականների զարգացման ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» 2023 թվականի փետրվարի 9-ի N 174-Լ որոշում[45] (ՀԳԸՀ 52 հոդված, կետ (b), 54 հոդված, կետեր (c) և (d), ՃՔ 130 միջոցառում)

- **Առկա բացեր**

Ռազմավարության մեջ նախատեսված չեն՝

- Կլիմայի ազդեցության նկատմամբ հարմարվողականության միջոցառումների ծրագրերի մշակման բաղադրիչով միջոցառում:
- Կլիմայի փոփոխության հետ կապված առանձին խոցելի հիվանդությունների գնահատման միջոցառումներ:
- Վտանգավոր հիդրոդերևութաբանական երևույթների դեպքում /գերբարձր կամ գերցածր ջերմաստիճանների դեպքում/ զգայուն հիվանդություններ ունեցող խմբերի պաշտպանությանն ուղղված միջոցառումներ:
- Կլիմայի նկատմամբ առաջնահերթ զգայուն հիվանդությունների վերահսկման և կանխարգելման համակարգերի հզորացման միջոցառում:
- Վտանգավոր հիդրոօդերութաբանական երևույթների ժամանակ կլիմայական զգայուն հիվանդների և բնակչության վարքագծի ուղեցույցների կամ ձեռնարկների մշակման դրույթներ:

- **Առաջարկություններ**

Ռազմավարության մեջ նախատեսել՝

- Կլիմայի ազդեցության նկատմամբ հարմարվողականության միջոցառումների ծրագրերի մշակման միջոցառումներ:
- Կլիմայի փոփոխության հետ կապված առանձին խոցելի հիվանդությունների գնահատման միջոցառման վերաբերյալ դրույթ:
  վտանգավոր հիդրոդերևութաբանական երևույթների դեպքում /գերբարձր կամ գերցածր ջերմասիճաններ/ զգայուն հիվանդություններ ունեցող խմբերի պաշտպանությանն ուղղված միջոցառումներ:
- Վտանգավոր հիդրոօդերութաբանական երևույթների ժամանակ կլիմայական զգայուն հիվանդների և բնակչության վարքագծի ուղեցույցների կամ ձեռնարկների մշակման միջոցառում:
- Կլիմայի նկատմամբ առաջնահերթ զգայուն հիվանդությունների վերահսկման և կանխարգելման համակարգերի հզորացման միջոցառում:

7. «Միավորված Ազգերի Կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհուրդ ստեղծելու, դրա կազմը և աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի հոկտեմբերի 2-ի N 955-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ վարչապետի 2021թ. հուլիսի 6-ի 719-Ա որոշում[46] (ՀԳԸՀ 52 հոդված, կետ (b), 54 հոդված, կետեր (c) և (d), ՃՔ 130 միջոցառում)

---

[45] https://www.arlis.am/documentview.aspx?docid=174219

[46] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=154215

- **Առկա բաց**
- Որոշմամբ նախատեսվող միջգերատեսչական մշտական կամ ժամանակավոր աշխատանքային խմբերում ընդգրկված չեն հասարակական կազմակերպություններ ներգրավելու դրույթներ:

- **Առաջարկություն**
- Որոշմամբ նախատեսել միջգերատեսչական մշտական կամ ժամանակավոր աշխատանքային խմբերում հասարակական կազմակերպությունների ներգրավում:

8. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-150-Ն օրենք[47] (ՀԳԸՀ 52 հոդված, կետ (b), 54 հոդված, կետեր (c) և (d), ՃՔ 130 միջոցառում)

- **Առկա բացեր**
- Կարգավորված չէ նախատեսվող գործունեության ազդակիր համայնքի որոշման հարցը: Սույն օրենքից հանված է լիազոր մարմնի կողմից ազդակիր համայնք որոշելու դրույթը, ինչն ամրագրված է եղել նախկիում: Ազդակիր համայնքի որոշելը նախաձեռնողի հայեցողությանը թողնելը պարունակում է մի շարք բնապահպանական ռիսկեր, հակասում է օրենքի նպատակներին (շրջակա միջավայրի բաղադրիչների վրա գործունեության ազդեցության գնահատում՝ օդ, ջուր, հող, կենսաբազմազանություն կլիմա):
- Հստակ սահմանված չէ ՇՄԱԳ փորձաքննական եզրակացության փաստաթղթի իրավական կարգավիճակը և այն չունի պարտադիր կատարման ենթակա վարչական ակտի կարգավիճակ:
- Հոդված 11-ի 5-րդ կետի՝ համայնքապետի կողմից պարտադիր խորհրդատվության տրամադրման պահանջն անուղղակիորեն ղեկավարին ի պաշտոնե դարձնում է տվյալ նախաձեռնությանն աջակցող կողմ, ինչը կարող է խոչընդոտել համայնքի անդամների ազատ կարծիքի արտահայտմանը և համայնքի օրինական շահերի պաշտպանությանը:
- 20-րդ հոդվածի փորձաքննական դրական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչվելու՝ «ի հայտ են եկել էկոլոգիական նոր գործոններ» դեպքի կիրարկումն անհնարին է, քանի որ օրենքում բացակայում է «էկոլոգիական նոր գործոն» հասկացությունը, ինչպես նաև բացակայում է այդ գործոնի գնահատման մեթոդաբանության մշակման պահանջը:
- 16-րդ հոդվածի 3-րդ մասում նշված փորձաքննության ենթակա գործունեության վերաբերյալ ավագանու նախնական՝ հիմնավորված համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու դրույթը խնդրահարույց է, քանի որ առաջին հանրային լսումների ընթացքում համայնքին տրամադրվում է մակերեսային տեղեկատվություն նախատեսվող գործունեության մասին: Այդ փուլում հնարավոր ռիսկերի և դրանց մեղմմանն ուղղված միջոցառումները չեն ներկայացվում շահագրգիռ կողմերին: Համայնքի ավագանու այդ որոշումը կազդի համայնքի բնակիչների ազատ կամքի արտահայտվելու իրավունքի վրա

[47] https://www.arlis.am/documentview.aspx?docid=178443

հետագա ՇՄԱԳ գործընթացի հանրային քննարկումների ժամանակ, երբ արդեն կներկայացվեն ռիսկերը, միջոցառումները և այլն:

- Հստակեցված չէ համայնքի դիրքորոշումը հաշվի առնելու կարգը:
- Հակասություն կա 17-րդ հոդվածի 1-ին կետի, 16-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ կետերի միջև. մի կետում նշվում է, որ պետք է լինի ավագանու որոշում, մյուսում նշվում է, որ կարող է առանց որոշման ներկայացվել փորձաքննության փաթեթը, իսկ երրորդ կետով պահանջվում է լրակազմ փաթեթի առկայություն:

➢ **Առաջարկություններ**

- Օրենքով կարգավորել նախատեսվող գործունեության ազդեցության ազդակիր համայնքի որոշման հարցը:
- Օրենքով ՇՄԱԳ փորձաքննական եզրակացության փաստաթղթին տալ պարտադիր կատարման ենթակա վարչական ակտի կարգավիճակ:
- Հոդված 11-ի 5-րդ կետից հանել համայնքապետի կողմից նախաձեռնողին պարտադիր խորհրդատվության տրամադրման պահանջը, նախատեսել միայն համայնքապետի կողմից նախաձեռնողին տեղեկատվություն տրամադրելու դրույթ:
- Սահմանել «էկոլոգիական նոր գործոն» եզրույթը՝ ապահովելու 20-րդ հոդվածի փորձաքննական դրական եզրակացությունն ուժը կորցրած ճանաչվելու՝ «ի հայտ են եկել էկոլոգիական նոր գործոններ» դեպքի կիրարկումը: Լիազոր պետական մարմնին պատվիրակել էկոլոգիական նոր գործոնի որոշման մեթոդաբանության մշակումը:
- Նախատեսել ազդակիր համայնքի դիրքորոշումը հաշվի առնելու կարգի մշակում:
- Օրենքում ամրագրել դրույթ փորձաքննությանը ներկայացվող փաստաթղթերի փաթեթում համայնքի դիրքորոշման մասին փաստաթղթի պարտադիր լինելու մասին:

9. «Պետական փորձաքննական դրական եզրակացություն ստացած հիմնադրութային փաստաթղթերում չներառված՝ բնության հատուկ պահպանվող տարածքներում կամ անտառային հողերում կամ բնակավայրերի կանաչ գոտիներում կամ պատմամշակութային հուշարձանների սահմաններում կամ բնապահպանական հողերում գնահատման և փորձաքննության ենթակա գործունեության տեսակները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 2N 638 – Ն որոշում[48] (ՀԳԸՀ 52 հոդված, կետ (b), 54 հոդված, կետեր (c) և (d), ՃՔ 130 միջոցառում)

➢ **Առկա բացեր**

- Որոշումը հակասում է ՀՀ անտառային օրենսգրքի պահանջին: ՀՀ անտառային օրենսգրքի 46-րդ հոդվածով արգելվում է անտառային հողերի նպատակային օգտագործման փոփոխություն:
- Որոշումը հակասում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Օրենքի 16, 17 և 18-րդ հոդվածներով արգելոցում, ազգային պարկում և արգելավայրում արգելվում է բուսական և կենդանական

[48] https://e-gov.am/gov-decrees/item/42558/

աշխարհի ներկայացուցիչների բնակության միջավայրի պայմանների խախտումը:

- Որոշումը հակասում է Կլիմայի փոփոխության ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի Փարիզյան համաձայնագրի շրջանակներում Հայաստանի ստանձնած անտառածածկի ավելացման պարտավորության կատարմանը:
- Որոշումը հակասում է ՀՀ ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N 41 արձանագրային ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 22-ի N 610 – Լ, ՀՀ կառավարության 2023 թ.դեկտեմբերի 28-ի N 2318-Լ որոշումներին:

➢ **Առաջարկություններ**

- Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 2N 638 – Ն որոշումը:

10. «Ռազմավարական էկոլոգիական գնահատման և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուղեցույցները հաստատելու մասին» նախարարի հրամանի նախագիծ[49] (ՀԳԸՀ 52 հոդված, կետ (b), 54 հոդված, կետեր (c) և (d), ՃՔ 130 միջոցառում)

➢ **Առկա բացեր**

- Նախատեսվող գործունեության բնութագրման նպատակով առաջարկվող հարցերից աղյուսակ N1-ում ներառված 16-րդ՝ «Արդյո՞ք նախատեսվող գործունեությունն իրականացվելու է ազդակիր համայնքի բնակիչների համար տեսանելի վայրում» հարցն ազդակիր բնակիչների վրա գործունեության հնարավոր ազդեցության գնահատման ցուցիչ չէ:
- Ա կատեգորիայի գործունեության համար նախաձեռնողից պահանջվող. «շրջակա միջավայրի և դրա բաղադրիչների վրա կլիմայի փաստացի և կանխատեսվող փոփոխությունը՝ փոփոխությանը հարմարվելու կարողություն և տեխնոլոգիական լուծումների ամբողջություն՝ ուղղված ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը և ջերմոցային գազեր կլանող կարողությունների ստեղծման» մշակման պահանջի բավարարման համար բացակայում է պարզ և հանրամատչելի ընթացակարգ: Առաջարկվող ուղեցույցի գործառնական կիրառելիությունը հնարավոր չէ ապահովել, քանի որ դրա գնահատման համար պահանջվում է նեղ-մասնագիտական բարձր կարողություններ:
- Ազդակիր համայնքից նախատեսվող գործունեության վերաբերյալ նախնական համաձայնություն ստանալու ընթացակարգը հստակեցված չէ, ինչը կարող է շահարկման պատճառ հանդիսանալ:
- Ուղեցույցի 42-րդ կետի Աղյուսակ N15-ի 3-րդ կետում նշվում է, որ հանրային մասնակցության և խորհրդակցությունների արդյունքները նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթի նախագծում հաշվի են առնվում, մինչդեռ նրանք պետք է ունենան որոշիչ դեր:

[49] https://www.e-draft.am/index.php/projects/7464/about

- **Առաջարկություններ**

- Մշակել պարզ և հանրամատչելի ընթացակարգ Ա կատեգորիայի գործունեության համար նախաձեռնողից պահանջվող «շրջակա միջավայրի և դրա բաղադրիչների վրա կլիմայի փաստացի և կանխատեսվող փոփոխությունը՝ փոփոխությանը հարմարվելու կարողություն և տեխնոլոգիական լուծումների ամբողջություն՝ ուղղված ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը և ջերմոցային գազեր կլանող կարողությունների ստեղծման» մշակման պահանջի բավարարման համար:
- Հստակեցնել ազդակիր համայնքից նախատեսվող գործունեության վերաբերյալ նախնական համաձայնություն ստանալու ընթացակարգը:
- Ուղղեցույցի աղյուսակ N15-ի 3-րդ կետում ամրագրել հանրային մասնակցության և խորհրդակցությունների արդյունքների որոշիչ դերը նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթի նախագծում:

11. ՀՀ Ջրային օրենսգրքում 07.07.22 ՀՕ-316-Ն: կատարված փոփոխություններ[50] (ՀԳԸՀ 52 հոդված, կետ (b), 54 հոդված, կետեր (c) և (d), ՃՔ 130 միջոցառում)

- **Առկա բացեր**

- Կատարված փոփոխությունները կրում են զուտ ֆորմալ բնույթ, քանի որ կլիմայական հասկացությունների ներմուծումը մայր օրենք չի ապահովում գործնականում դրանց կիրառելիությունը: Ջրային ոլորտում կլիմայական ազդեցությունների և դրանց բացասական ազդեցությունների մեղմման, ջրօգտագործման հայտերի գնահատման մեխանիզմները բացակայում են: Ջրային ոլորտի կառավարման և պահպանության պետական մարմնի լիազորությունները սահմանող 10-րդ հոդվածում չեն ամրագրվել՝ 1. կլիմայի փոփոխությամբ կամ անտրոպոգեն ազդեցությամբ պայմանավորված ջրային պաշարի նվազման չափորոշիչներ սահմանելու լիազորություններ, 2. կլիմայի ներկա և կանխատեսվող փոփոխությունների հետևանքով նախատեսվող ջրօգտագործման հետևանքով ջրային ռեսուրսների խոցելիությունը գնահատող չափորոշիչներ սահմանելու լիազորություններ:

- **Առաջարկություններ**

- Օրենսգրքի հոդված 10-ում ջրային ռեսուրսների կառավարման և պահպանման մարմնի համար ամրագրել «կլիմայի փոփոխությամբ կամ անտրոպոգեն ազդեցությամբ պայմանավորված ջրային պաշարի նվազման», «կլիմայի ներկա և կանխատեսվող փոփոխությունների հետևանքով նախատեսվող ջրօգտագործման հետևանքով ջրային ռեսուրսների խոցելիության» գնահատման չափորոշիչներ սահմանելու իրավասություն:

[50] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166206

12. **«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք** (07.12.2022թ.)[51] **(ՀԳԸՀ 52 հոդված, կետ (b),54 հոդված, կետ (a), (c) և (d), ՃՔ 120, 130 միջոցառումներ)**

- **Առկա բացերը**

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի հասկացություններում բացակայում է «ջերմոցային գազերի արտանետումների թույլտվություն» եզրույթը:

- **Առաջարկություն**

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի հասկացություններում ամրագրել «ջերմոցային գազերի արտանետումների թույլտվություն» եզրույթը: Այդ եզրույթի ամրագրումը կստեղծի նախադրյալներ «Կլիմայական քաղաքականության մասին» ՀՀ օրենքի մշակման գործընթացում ներառելու համար:

13. «Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարությունը (մինչև 2050 թվական) հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023թ. դեկտեմբերի 28-ի 2318-Լ որոշում[52] (ՀԳԸՀ 54 հոդված, կետ (a), ՃՔ 120 միջոցառումներ)

- **Առկա բացեր**

- Արդյունաբերական ոլորտում ջերմոցային գազերի կրճատմանն ուղղված միջոցառումները սահմանափակվել են միայն ցեմենտի, կրի և ապակու արտադրությունից առաջացող ջերմոցային գազերով: Արդյունաբերական ոլորտում չի դիտարկվել հանքարդյունաբերության ոլորտը հողի՝ «օրգանական» ածխածնի կուտակման կարողության վատթարացման և ջերմոցային գազերի արտանետման տեսանկյունից: Չեն դիտարկվել նաև ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման տեխնոլոգիաներում պահանջվող CO_2-ի պարտադիր արտանետումները:
- Հստակեցված չեն ԶԳ-ՑԱԶԵՌ միջոցառումների իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցները:

- **Առաջարկություն**

- Ռազմավարության մեջ «արդյունաբերական» ոլորտում դիտարկել հանքարդյունաբերությունը հողի՝ «օրգանական» ածխածնի կուտակման կարողության վատթարացման և ջերմոցային գազերի արտանետման տեսանկյունից:
- Ռազմավարության մեջ դիտարկել ստորերկրյա հանքային ջրերի հանքավայրերի շահագործման տեխնոլոգիաներում պահանջվող CO_2-ի պարտադիր արտանետումները:
- Ռազմավարության մեջ հստակեցնել ԶԳ-ՑԱԶԵՌ միջոցառումների իրականացման համար պահանջվող ֆինանսական միջոցները:

---

[51] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172207
[52] https://www.e-gov.am/gov-decrees/item/41925/

14. «Օզոնային շերտի պահպանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք[53] (ՀԳԸՀ 54 հոդված, կետ (j), ՃՔ 124 միջոցառումներ)

- **Առկա բացեր**

- «Օզոնային շերտի պահպանության մասին» օրենքում նախատեսված չէ դրույթ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կանոնադրության մեջ լրացում կատարելու վերաբերյալ՝ ապահովելու զսպման մեխանիզմների կիրարկումը:

- **Առաջարկություն**

- «Օզոնային շերտի պահպանության մասին» օրենքում նախատեսել դրույթ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կանոնադրության մեջ լրացում կատարելու վերաբերյալ՝ ապահովելու զսպման մեխանիզմների կիրարկումը:

Կլիմայական քաղաքականության իրականացումը համայնքներում

«Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ն ուսումնասիրություններ է իրականացրել Արագածոտնի, Լոռու, Վայոց ձորի, Տավուշի մարզերի Թալին, Փամբակ, Եղեգիս և Դիլիջան համայնքներում «**Ազդակիր համայնքները և քաղաքացիական հասարակական կազմակերպությունները՝ Հայաստանի էներգետիկայի և կլիմայի փոփոխության քաղաքականություններում սոցիալ-էկոլոգիական մշակույթի ներդրման մասնակից»** ծրագրի շրջանակներում՝ ՄԱԶԾ ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի, «ԵՄ կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի աջակցությամբ: Իսկ Գեղարքունիքի մարզի Գեղամասար և Վերին Գետաշեն համայնքներում «Սոցիալ-Էկոլոգիական պատասխանատվություն» ծրագրի շրջանակներում «Տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» (ԴԱՏԱ) ծրագրի՝ ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ, «Հանուն Հարավային Կովկասում էներգետիկ պարադիգմի փոփոխությունների, 2-րդ փուլ» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում, Brot für die Welt Protestant Development Service-ի աջակցությամբ: Ուսումնասիրությունների նպատակն է եղել պարզել, թե որքանով են համայնքները կախված կլիմայի փոփոխությունից և ինչքանով են մասնակցում ՀՀ կլիմայական քաղաքականության իրականացմանը: Ուսումնասիրվել են ՀՀ կառավարության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, մարզպետարանների, խոշորացված համայնքների պաշտոնական կայքերը, ազգային և միջազգային համապատասխան իրավական ակտերը, փաստաթղթերը, անցկացվել են հարցազրույցներ, քննարկումներ, ինչպես նաև հարցումներ ոլորտային մասնագետների, ֆոկուս խմբերի և ՏԻՄ-երի հետ:

Համայնքներում բացահայտված խնդիրները.

- Համայնքների սուբվենցիոն ծրագրերում չի գնահատվում կլիմայական ազդեցության բաղադրիչը:

[53] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=187764

- Սուբվենցիոն ծրագրերը չեն դիտարկվել, գնահատվել և պլանավորվել ջերմոցային գազերի արտանետումների կրճատման տեսանկյունից։ Համայնքները չունեն կամովին ստանձնած նման պարտավորություններ։
- Համայնքներն ունեն մասնագետների պակաս՝ մշակելու կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվողականությանը, ինչպես նաև էներգետիկ անցմանն ուղղված ծրագրեր։
- Համայնքների հնգամյա զարգացման ծրագրերում առկա չէ կլիմայական և կայուն էներգետիկ միջոցառումների պլան։
- Համայնքներն ունեն կլիմայական քաղաքականության մասին իրազեկվածության ցածր մակարդակ։

Ամփոփում

ՀԳԸՀ-ի կիրարկման ճանապարհային քարտեզի միջոցառումների կատարման ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կլիմայական միջոցառումների կատարման ուղղությամբ ՀՀ և ԵՄ օրենսդրության մոտարկման համար ընդունվել են հիմնական իրավական ակտերը, ինչպես նաև ստեղծվել են ինստիտուցիոնալ կարողություններ։

ԵՄ իրավական ակտերին մոտարկվել է 6 ՀՀ օրենք, մշակվել է 1՝ «Կլիմայի քաղաքականության մասին» ՀՀ օրենքի հայեցակարգի և օրենքի նախագծի փաթեթը, 16 ենթաօրենսդրական ակտ (ՀՀ վարչապետի և ՀՀ կառավարության որոշումներ), զեկույցներ, ուղեցույցներ։

Չնայած կատարված ծավալուն աշխատանքներին՝ դեռ կարիք կա ամբողջացնել պահանջվող բոլոր իրավական ակտերի փաթեթը՝ սահմանելով իրատեսական ժամկետներ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման համար, գործնական կիրառման համար մշակել ոլորտային մեթոդաբանություններ, ուժեղացնել համայնքների կարողությունները։

Համայնքային մակարդակում առկա է կլիմայական քաղաքականության իրականացման խնդիր։ Համայնքներն իրենց հնգամյա զարգացման և սուբվենցիոն ծրագրերը չեն դիտարկել, գնահատել և պլանավորվել ջերմոցային գազերի արտանետումների կրճատման, կլիմայական դիմակայունության բարձրացման տեսանկյունից, ունեն կլիմայական քաղաքականության մասին իրազեկվածության ցածր մակարդակ։

Իրավական ակտերի փոփոխությունների առաջարկությունները կնպաստեն օրենսդրական հակասությունների վերացմանը, կլիմայական քաղաքականությունում համայնքների դերակատարման բարձրացմանը, կօգտագործվեն ՀԳԸՀ-ի ՃՔ-ի թարմացման գործընթացում։